Չխամրող հաղթանակ

ԻՇԽԱՆ ԻՇԽԱՆՅԱՆ

1991 թվականի սեպտեմբերի 2-ը հայոց նորագույն պատմության կարեւորագույն տարեթվերից է: Այդ օրը հռչակվեց Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը, որը ազգային-ազատագրական պայքարի չորրորդ տարում իրեն անկախ հայտարարեց Ադրբեջանից: Արհեստականորեն ստեղծված մի երկիր, որ յոթանասուն տարի առաջ նվեր ստանալով տոհմիկ հայկական երկրամասը այդ ամբողջ ընթացքում դաժանորեն շահագործեց նրա բնական ու մարդկային ռեսուրսները չմոռանալով վերջնական նպատակը հասնել Լեռնային Ղարաբաղի բացարձակ հայաթափմանը: Մի բան, որ նպաստավոր պայմաններում հաջողվել էր հայոց Նախիջեւանում:

Հենց այդ ազգակործան հեռանկարը ավելի համառ, շրջահայաց ու արմատական էր դարձրել արցախահայությանը, նրա քաղաքական ղեկավարությանը: Պատմության հետագա ընթացքը ցույց տվեց, որ սեփական պետական կառույցների ստեղծումը լավագույն միջոցն էր վերջնական հաղթանակի ապահովման տեսանկյունից: Եթե չհռչակվեր անկախություն ու չկազմավորվեր հանրապետություն, հայոց պայքարը շարունակելու էր մնալ Ադրբեջանի ներքին գործը սրանից բխող բոլոր բացասական հետեւանքներով: Անկախությունն ու Հանրապետությունը միանգամից Արցախը դարձրեցին հակամարտության կողմ, որի, որպես առանձին միավորի գոյության հետ ստիպված էր հաշվի նստել Բաքուն:

Դյուրին չէր անկախության ճանապարհը: Կորցնելով բանականությունը թշնամին լայնամասշտաբ պատերազմ հայտարարեց Արցախի դեմ նպատակ ունենալով զավթել նաեւ Հայաստանի Հանրապետության տարածքները: Այդ առումով չափազանց աղմկոտ էր հանդես գալիս Աբուլֆազ Էլչիբեյը: 1992-1994թթ. դաժան պատերազմական գործողություններից հետո Արցախը պահպանեց անկախությունը, հանրապետությունը եւ ազատագրեց հայ ժողովրդից անօրինականորեն խլված շրջանները, որոնք նաեւ մեծացրեցին նրա անվտանգության մակարդակը: Այսօր Օմարի լեռնանցքից մինչեւ մայր Արաքս ընկած հյուսիսային եւ արեւելյան պաշտպանական սահմանը հուսալիորեն պաշտպանված է: 1994 թվականի մայիսի 12-ին հրադադարի համաձայնագիր է կնքվել եւ արդեն վեց տարի է ուժի մեջ է: Հետպատերազմյան ժամանակահատվածում բանակցություններ են ընթացել, Արցախը պահպանել է իր տարածքային ամբողջականությունը, դարձել միջազգայնորեն ճանաչված, ստեղծել իր ներկայացուցչությունները: Այժմ էլ պարզ է, որ առանց նրա մասնակցության չի կարող լուծվել սկզբունքային ցանկացած հիմնահարց:

Ավելի դրամատիկ զարգացումներ եղան ներպետական կյանքում: Որպես երիտասարդ պետական կառույց ունեցավ նաեւ իր ստվերոտ կողմերը: Խոսքը չարաշահումների, յուրացումների, իշխանության լիազորությունների գերազանցման եւ այլնի մասին է: Դժվար է չնշել նախագահի դեմ կատարված մահափորձի մասին, որի կազմակերպիչները, ըստ նախնական մեղադրանքի, նպատակ են ունեցել իրագործելու պետական հեղաշրջում: Իրոք, բարդ հարցեր են. հուսանք, որ առաջիկա դատավարությունը կտա բոլոր հարցերի պատասխանը: Կասկածից վեր է, որ արդար դատավարությունը ոչ միայն կմատնանշի մեղավորներին, այլեւ կբարձրացնի ԼՂՀ իրավական համակարգի հեղինակությունը: Կփաստի, որ արցախցին ոչ միայն քաջարի կռվող է, այլեւ արդարամիտ դատող:

Արցախի ազատագրումը եղել է սերունդների երազանքը, եւ ոչ մի սոցիալ-տնտեսական, իրավական բարդ ու կնճռոտ հարց չպետք է սասանի հանրապետության հիմքերը: Պետք է ընդմիշտ վերջ տրվեն ներազգային գավառական քրքմնջոցներին եւ ձեռք ձեռքի տված շենացվեն թե Արցախը եւ թե Հայաստանը: Հայոց մեծ աշխարհի անբաժան մասերը: Պաշտոնյաները այսօր կան, վաղը չկան (օրինակ, ո՞ւր է խղճուկ Կեւորկովը, որն ապրեց քծնելով Բաքվին): Կարեւորը հողն ու երկիրն է, որը դառնալու է հզորության, լիության աղբյուր: Լիահույս ենք, որ Անկախության հռչակման առաջին տասնամյակը Արցախը կնշի մարտական դիրքերի ամրությամբ, քաղաքական կայունությամբ ու ներքին խնդիրների լուծմամբ: